ԳՐԻԳՈՐ ՏԵՐ-ՄԵԼՔԻՍԵԴԵԿՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Բանասիր. գիտ. դոկտոր Կ. Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

1970-ական թթ. սկզբներին Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան դրադարանում հայտնաբերվեց հայ նարոդնիկ գործիչներից մեկի՝ Գրիգոր Տեր-Մելքիսեդեկյանի «Աշխատանք—Труд» շաբաթաթերթի լրիվ հավաքածոն (բացակայում էր միայն 1880 թ. 6-րդ համարը)։ Մինչ այդ, մասնագետներին հայտնի էր միայն Վ. Միրաքյանի արխիվում պահվող շաբաթաթերթի մեկ համարի (1882, № 1) արտագրությունը։ Շաբաթաթերթը հնարավորություն տվեց ավելի ճիշտ և համակողմանի լուսաբանել Գրիգոր Տեր-Մելքիսեդեկյանի հասարակական համոզումների և նարոդնիկական գործունեության իսկությունը։ Բացի դրանից, ճշգրտվեց անգլիական տնտեսագետ Թոմաս Տորնտոնի «Աշխատանք» աշխատության և Մելքիսեդեկյանի տնտեսագիտական հայացքների միջև եղած կապերի բնույթը։

«Աշխատանք—Труд»-ի համարները հնարավորություն ստեղծեցին գիտականորեն ճիշտ բնութագրել հայ գյուղացու տնտեսական դրությունը վերափոխելու ելած նարոդնիկ գործչի քաղաքական ու սոցիալական համոզումների համակարգը։

Ո՞վ էր Գրիգոր Տեր-Մելքիսեդեկյանը։ Ներսիսյան դպրոցն ավարտած մի ուսուցիչ, որ իր մեջ կոչումն էր զգում լուսավորել ազգը և փրկել նրան սոցիալական թշվառությունից։ Ինչպես վկայում են ժամանակակիցները, դեռ Ներսիսյանում սովորելու տարիներին կարդացել էր «Հյուսիսափայլը» և Նալբանդյանին։ «Երկու տողը» արտագրել և պահում էր իր մոտ։ Ընդարձակ հատվածներ էր անգիր ասում. «Մենք ազատակամ նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու...»։ Ուսուցչությամբ վաստակածը բաժանում էր չքավոր գյուղացիներին։ Չէր վախենում ոչ մեկից։ Հարուստների երեսին ասում էր ամենահանդուգն խոսքեր։ Ծաղրում էր հոգևորականներին։ Մենամենակ, կիսաքաղց անցնում էր Շուլավերից Թիֆլիս և թերթ հրատարակում՝ խղճուկ եկամուտների հաշվին։ Թաղված էր պարտքերի մեջ։ Գրում էր թղթակցություններ, որ կարող էին իրեն կործանել[1]։ 1870-ական թթ. վերջերին «Աշխատանք—Труд»-ը հրատարակելուց առաջ[2] ծանոթացավ բուրժուական

---

1 *Տե՛ս «Աշխատանք—Труд», 1880, № 1, «Պատկերների գավիթ» փաստագրական ակնարկը։*

2 *Ասում ենք «Աշխատանք—Труд»-ը հրատարակելուց անմիջապես առաջ, որովհետև նախկինում հրապարակված և ոչ մի աշխատության մեջ, նույնիսկ «Նվեր քյասիբ գեղջիներին» հրապարակախոսական երկում (լույս է տեսել 1879-ին) բացարձակապես չեն երևում Տորնտոնից վերցրած տնտեսագիտական պատկերացումների ու գաղափարների հետքերը, հանգամանք, որ հաստատում է, թե Գ. Տեր-Մելքիսեդեկյանը Տորնտոնին կարդացել և յուրացրել է 1879-ից ոչ շուտ։ Պատահական չէ անգլիական տնտեսագետի նկատմամբ համակրանքի անմիջական արտահայտությունը՝ նրա գրքի խորագիրը իր շաբաթաթերթի ճակատին դնելու որոշումը։*

տնտեսագետ Տորնտոնի հայացքներին, հատկապես նրա «Աշխատանք» աշխատությանը և, փաստորեն, այս շրջանից սկսած, բռնեց այդ աշխատության մի քանի գաղափարները իր շաբաթաթերթում պրոպագանդելու ուղին։ Մեռավ 1882 թ., 34 տարեկան հասակում։

Գ. Տեր-Մելքիսեդեկյանը նարոդնիկ-քարոզիչ էր և բացարձակացնում էր ուսման նշանակությունը՝ լուսավորության ու գիտության տարածման հետ կապելով մարդկանց համար տնտեսական բարեկեցություն ստեղծելու հեռանկարներն ու հնարավորությունները։ «Աշխատանք—Труд»-ի նյութերից պարզ երևում է, որ նա շահեկան տնտեսական ուղի էր համարում կապիտալիզմի զարգացումը Անդրկովկասում։ 1861 թ. փետրվարյան ռեֆորմը ճակատագրական էր համարում Ռուսաստանի և Ռուսաստանում ապրող ժողովուրդների համար։

Այս շրջանից է, որ Գ. Տեր-Մելքիսեդեկյանի համոզմամբ կովկասյան երկրամասում ծաղկեց «արդյունաբերական աշխատանքը» և «արդյունաբերականությունը» (իմա՝ կապիտալիզմը—Գ. Ռ.), որպես մի «հայտնի պետության գործող ուժի իսկական աղբյուր»։ Հրապարակախոսը մեծ նշանակություն էր տալիս «արդար աշխատանքի սկզբունքին»։ Տորնտոնի մեկնաբանությամբ «արդար աշխատանքի սկզբունքը» բուրժուայի և պրոլետարի (հարուստի և մշակի)՝ միմյանց օգնելու դասային պարտականության ճանաչումն է և կատարումը։ Ճիշտ այնպես, ինչպես մշակը չի կարող ապրել առանց հարստի օգնության, այնպես էլ հարուստը՝ մշակի։ «Կա, ուրեմն, մեկ-մեկու օգնելու հարկավորություն»։ Այդ հարկավորության գիտակցումն ու գործի վերածելը՝ «արդար աշխատանքի սկզբունքն է»։ Տորնտոնը հենց այստեղ էլ գտնում էր սոցիալական հակասությունները և դասակարգային ներհակությունները վերացնելու համադարմանը։ «Հալալ աշխատանքի սկզբունքը» մասնավոր սեփականատիրական և խորապես բուրժուական սկզբունք էր։

Տորնտոնի աշխատությունից քաղագրելով մտքեր ու տեսակետներ, Գ. Տեր-Մելքիսեդեկյանը գրում է «Լո՜ւյս, լո՜ւյս... թող շատ լինի լույսը» հոդվածը և տպագրում «Աշխատանք—Труд»-ի առաջին համարում (1879 թ. դեկտեմբեր)։ Մի քանի ամիս անց նա նորից անդրադառնում է տորնտոնյան գաղափարներին «Մշակների հարցի առիթով» հոդվածում[3] և բացահայտում իրոք սահմանափակ ու գռեհիկ իր պատկերացումները (քաղված դարձյալ Տորնտոնի աշխատությունից) մշակ դասի և դրամատերերի փոխհարաբերությունների վերաբերյալ։ Հակասություններով լի, ներքին ողնաշարից զուրկ այդ հոդվածների ընդհանուր գաղափարական լիցքը, այնուամենայնիվ, սեփականության և բուրժուական հասարակական հարաբերությունների պաշտպանությունն է, ընդ որում, մի պաշտպանություն, որ կատարվում է մերթ ուղղակի ու անմիջական պատգամախոսությամբ, մերթ էլ՝ Տորնտոնի դեմ թաքուն ու ենթաբընագրային առարկումներով։

Եթե Տորնտոնը բուրժուազիայի իսկական գաղափարախոսն է և ըստ այդմ էլ նրա ամբողջ «տնտեսագիտությունը» ուղղված է շահագործողական կարգերի ու հարաբերությունների բացահայտ ջատագովանքին ու պաշտպանությանը, ապա Գ. Տեր-Մելքիսեդեկյանը, հավանելով ու ըստ երևույթին առաջին անգամ հանդիպելով աշխատանքի ու կապիտալի փոխհարաբերություններին

[3] «Աշխատանք—Труд», 1880, № 4։

Ենվիրված տորնտոնյան բացատրություններին, չի կարողանում որոշ սրբագրումներ չմտցնել, այսպես ասած, որոշ ինքնակա լրացումներ չանել այն բնագրին, որից ինքը օգտվում է։

Ահա, օրինակ, այսպիսի համադրություն. «Բայց ակնհայտ է, որ մշակը չպետք է իր տիրոջից ավելին սպասի, ինչ տերը պարտավոր է տալ նրան,— գրում է Տորնտոնը։— Ճիշտ այդպես, ակնհայտ է նաև, որ փոխադարձ համաձայնության պայմաններից դուրս, գործատերը ոչինչ պարտավոր չէ մշակին տալ։ Մշակի հետ համաձայնության գալուց առաջ նա (գործատերը) ոչ մի դեպքում պարտավոր չէր նրան աշխատանք տալ։ Նա կարող էր առհասարակ դրա կարիքը կամ որևէ ուրիշ մշակի կարիքը չունենալ, կամ նա կարող էր նախապատվել այդ մշակին ուրիշ այլ մշակից։ Բայց եթե գործատերը պարտավոր չէ աշխատանք տալ, ապա, ինքնին հասկանալի է, նա պարտավոր էլ չէ այդ աշխատանքը տալ մի հայտնի պայմանով։ Հետևաբար, եթե նա համաձայն է աշխատանք տալ, ապա և իրավունք ունի կանխագրել իր պայմանները, և որքան էլ դաժան, ժլատ կամ հրեշավոր լինեն այդ պայմանները, դրանք երբեք և ոչ մի դեպքում չեն կարող լինել անարդար»[4]։ Ահա տորնտոնյան բացատրություններից մի ճաշակ ընթերցողին։

Բայց Գ. Տեր-Մելքիսեդեկյանը այդպես չէ, որ «պաշտպանում է» գումարատերերին։ Նա դնում է այսպես կոչված «արդար աշխատանքի սկզբունքը» և գտնում, որ գրականությունը «չպիտի պաշտպանի ո՛չ հարստին (գումարատերին), ո՛չ էլ մշակ դասին», և պետք է «գանգատ բարձրացնի էն կողմի դեմ, որը քանդում է պայմանից իր վրա դրած պարտականությունքը»[5]։

Մինչդեռ Տորնտոնը, որպես բուրժուազիայի դասակարգային շահերի պաշտպան և քարոզիչ, ամենուրեք ելնում է նույն այդ գումարատերերի տնտեսական ու հասարակական արտոնյալ դրության խոր գիտակցությունից և հենց այդ գիտակցության վրա հենում տնտեսագիտական իր վերլուծումները, Գ. Տեր-Մելքիսեդեկյանը, այնուամենայնիվ, չնայած արտաքին որոշ կոպտություններին («Մշակը նույնպես թող լոի ու չի համարձակի ձեռք բարձրացնել հարստի վրա քիչ վարձ ստանալու պատճառով» կամ՝ «Աղքատը թող մեռնի քաղցածությունից, քանի որ կարող էր աշխատել ու չի աշխատում, որովհետև առանց աշխատելու «ողորմություն» ուզելով նա վիրավորում է արդար աշխատանքի սկզբունքը»[6]) և դատապարտումի թվացող տոնին, ջանում է հավասարակշռել գումարատերի և մշակների շահերը։

Ավելին, ինչ-որ տեղ, տողամեջ, ոչ բացահայտ արտահայտելով խոր մրտահոգություն մշակների սոցիալական դրության առթիվ, Գ. Տեր-Մելքիսեդեկյանը փորձում է տորնտոնյան «ճշմարտությունները» քարոզել, առանց մինչև վերջ հասկանալու դրանց դասակարգային բովանդակությունը և տնտեսագիտական իմաստը։

Խնդիրն այն է, որ Տորնտոնի մակերեսային ընթերցումը մեր հրապարակախոսին հնարավորություն չի տվել հասկանալ կամ գոնե հիմնականում հասկանալ անգլիական տնտեսագետի մտահանգումների և եզրակացությունների ծայրահեղորեն ռեակցիոն բնույթը։ «Աշխատանքը,— գրել է Տորնտոնը,—

---

4 В. Т. Торнтон, Труд, Спб., 1870, էջ 107—108։

5 «Աշխատանք—Труд», 1879, №1։

6 Նույն տեղում։

չունի ոչ մի հենց իրեն պատկանող իրավունք»[7]։ Հասկանալո՞վ արդյոք, թե պարզապես բանավեճ մղելով, Գ. Տեր-Մելքիսեդեկյանը նկատում է, որ «Աշխատանքն էլ ունի իր անձեռնմխելի իրավունքները»[8]։ «Ինչի՞ մեջ պիտի լինեն արդարության և արդարությունից առաջացող օրինականության պահանջները։ Ամենից առաջ նրա մեջ, որ «մարդկային աշխատանքին» տրվին նրա չհերքվող իրավունքները,— պատասխանում ենք մենք հաստատամիտ կամքով»[9]։

Տորնտոնը, երբ պնդում է, թե աշխատանքը չունի ոչ մի հենց իրեն պատկանող իրավունք, ելնում է այն մտքից, թե բանվորները իրավունք չունեն հասարակությունից պահանջել ապրուստի այն մինիմումը, որը, փաստորեն, անհրաժեշտ է իրենց աշխատանքը վերարտադրելու համար։ Նա կարծում է, որ հասարակության յուրաքանչյուր անդամ ինքը պատասխանատու է իր համար։ «Հասարակությունը,— դիտում է Տորնտոնը,— չի կարող արդարացիորեն պատասխանատու լինել բոլոր առանձին անհատների բարեկեցության համար»[10]։ «Ամեն մի առանձին անհատ ոչ մի իրավունք չունի հասարակությունից պահանջել ուտելիք, հագուստ և դաստիարակություն»[11]։ Այստեղից հետևում է,— ասում է Տորնտոնը,— որ «կարիքավորները ոչ մի դեպքում և ոչ մի պայմանով չեն կարող աշխատանք պահանջել՝ որպես իրենց պատկանող իրավունք»[12]։

Տեսակետի ամբողջ ռեակցիոն էությունը հենց այստեղ է թաքնված։ Տրնտեսագետը փորձում է հերքել բանվորի աշխատանք ունենալու իրավունքը կամ նույնն է, թե «աշխատանքի իրավունքը», որպեսզի ցույց տա, թե «բանվորը վճռականորեն չունի ոչ մի իրավունք ո՛չ աշխատանքի, ո՛չ էլ մի որոշ քանակությամբ վարձատրության այդ աշխատանքի դիմաց, բացառությամբ այն աշխատանքի և վարձատրության, որ նա պայմանագրով համաձայնեցրել է գործատիրոջ հետ»[13]։ Այստեղից էլ՝ բոլոր դեպքերում գործատիրոջ իրավացիությունն ամրապնդող փաստարկի տրամաբանական ուժը։ Իրոք, եթե գումարատերը միշտ իրավացի ու արդարացի է (թող որ հրեշավոր լինեն անգամ այն պայմանները, որ նա առաջարկում է բանվորին), ուրեմն և՛ իրավացի, և՛ արդարացի է այն գինը, որ նա առաջարկում է բանվորին, ինչպես և պայմանագիրը, որով նա ստիպում է մշակներին աշխատել իր համար։ Ինչպես արդեն գիտենք և ինչպես հավատացնում է Տորնտոնը, այդ պայմանագիրը կընքվում է գործատիրոջ կամքի ու ցանկության համաձայն, որովհետև աշխատանք տվողն էլ է նա, փաստորեն, աշխատանքի գինը սահմանողն էլ։ Այստեղից էլ գործատիրոջ արտոնյալ դրության այսպես կոչված հասարակագիտական հիմնավորումն ու նրա սոցիալական պահանջների միստիֆիկացումը։

Մեր գավառացի հրապարակախոսը ոչ միայն չի կռահում, այլև միանգամայն անտեղյակ է Տորնտոնյան հարցադրումների դասակարգային ռեակցիոն էությանը։ Կամ թե, եթե մի կողմ դնենք կռահելու և անտեղյակության պարագան, համենայն դեպս նա փորձում է ինչ-որ չափով, իր խելքով, սրբագրել

7 Торнтон, նշվ. աշխ., էջ 103։
8 «Աշխատանք—Труд», 1880, № 4։
9 Նույն տեղում։
10 Торнтон, նշվ. աշխ., էջ 103։
11 Նույն տեղում, էջ 109։
12 Նույն տեղում, էջ 110։
13 Նույն տեղում, էջ 118։

հայացքների այն միասնական և մինչև վերջ հետևողական համակարգը, որ նվիրված է շահագործողական հարաբերությունների պանծացմանը և ջատագովանքին։

Առարկելով Ադամ Սմիթին և վիճելով ապրանքի աշխատանքային արժեքի նրա տեսության դեմ, Տորնտոնը՝ բուրժուական բարոյականության այս քարոզիչն ու մտքի մատակարարը, ի վերջո, հանգում է այն տափակ ու մակերեսային եզրակացությանը, թե ապրանքի արժեքի որոշման մի որոշակի չափ գոյություն չունի և չի, այնուամենայնիվ, եթե կա այդպիսին, ապա դա այն պայմանն է, որ ազատակամ կնքվում է գործատիրոջ և բանվորի միջև[14]։ Դարձյալ նույն կախարդական շրջանակը։

Միստիֆիկացնելով բանվորի և գործատիրոջ միջև կամավոր համաձայնությամբ կնքված պայմանագրի նշանակությունը, Տորնտոնը փորձում է ցույց տալ, թե «գոյություն չունի ազնվության և արդարության չափանիշ»։ Նա բերում է փրկարար նավաստիների օրինակը, որոնք մոտենալով խորտակվող նավին՝ անձնակազմը փրկելու համար պահանջում են նավաբեռի կեսը։ «Որքան էլ չափազանց և հրեշավոր է նրանց պահանջած գինը, այնուամենայնիվ, այն չի կարող լինել անազնիվ և անարդարացի. որպեսզի այդպիսին լինի, պետք է գերազանցի այն գինը, որը նրանք պարտավոր էին վերցնել. իսկ ակնհայտ է, որ այդպիսի գին գոյություն չունի, հետևաբար գոյություն չունի և ազնվության ու արդարության չափանիշ։ Բայց եթե այդ այդպես է, և բանվորները միանգամայն արդարացի են ստանալու այն չափազանց գինը, ինչը նրանք կարող են դուրս կորզել գործատերերից առանց խաբեբայության և հարկադրանքի, ապա և գործատերերը միանգամայն արդարացի են մշակների աշխատանքը ստանալ այն չափազանց ցածր գնով, որին բանվորը կամավորաբար համաձայնում է՝ անհրաժեշտությունից դրդված։ Ո՛չ մեկ և ո՛չ մյուս կողմը չունեն ոչ մի հատուկ իրավունք, բացի նրանցից, որ բխում են նրանց միջև եղած պայմաններից։ Ինչ էլ ուզում է լինեն այդ պայմանները, բայց դրանք չեն կարող անազնիվ լինել»[15]։

Տորնտոնի այս հայացքներն ու տեսակետներն է հիմնականում օգտագործել Գ. Տեր-Մելքիսեդեկյանը գրելով արդեն հիշատակված երկու հոդվածները՝ մինչև վերջ շրմբռնելով և մինչև վերջ չյուրացնելով անգլիական տընտեսագետի հասարակագիտական ու տնտեսագիտական պատկերացումների հիմնական ուղղությունը։

Տորնտոնի աշխատության վերնագիրը իր շաբաթաթերթի ճակատին դնելով, Գ. Տեր-Մելքիսեդեկյանը, այդպիսով, իրեն հռչակում էր մշակների դասի կամ աշխատանքի մարդկանց գաղափարախոս և նրանց շահերի իսկական պաշտպան։

«Հերքելով» Լուի Բլանին, որն ապացուցում էր բանվորների աշխատանքի իրավունքը և հիմնավորում անդամակարգ հասարակարգ ստեղծելու անհրաժեշտությունը, Տորնտոնը դիտում էր, թե դուրս գալով բանվոր դասակարգի այդ տեսաբանի դեմ և մերժելով նրա տեսությունը, ինքը գործում է նույն այն դասակարգի օգտին, «ում պաշտպանության համար որ կառուցված է այդ տեսությունը»[16]։

14 Նույն տեղում, էջ 106։
15 Նույն տեղում, էջ 117—118։
16 Նույն տեղում, էջ 89։

Այսպես չէր վարվում, սակայն, Գ. Տեր-Մելքիսեդեկյանը։ Շաբաթաթերթի առաջին համարում տպագրած «Լո՜ւյս, լո՜ւյս... թող շատ լինի լույսը» հոդվածի բուն իմաստը խարսխված էր իրավունքների և պարտականությունների կատարման այն հանձնարարականի վրա, որ Գ. Տեր-Մելքիսեդեկյանը տալիս էր մշակներին և գումարատերերին։ Նա հարցն այսպես էր պատկերացնում. գումարատերերը գործում են մշակների օգտին՝ սրանց աշխատանք տալով, մշակներն էլ գումարատերերի՝ սրանց համար աշխատելով։ Պայման կապելով ու հանձն առնելով որոշակի պարտականություններ (որովհետև մեկը մյուսի օգնության կարիքն ունի), նրանք, այդ երկու դասերը, կատարում են հանձնառած պարտականությունները և «այգպիսով երկուսն էլ շահվում են»[17]։ «Աշխատանք—Труд»-ի խմբագրի պատկերացմամբ այս հիմնաձողի շուրջն էր իբր թե պտտվում ամբողջ աշխարհի տնտեսական կյանքը։ Արդարությունը և արդար աշխատանքի սկզբունքը իրականանում էր պարտականությունների երաշխավորված ու ազնիվ կատարման մեջ։ «Երբ պայմանը կապվեց, էլ ո՛չ մշակն ունի իրավունք ետ կանգնել իր պարտականությունից ու պայմանից դուրս ավելի պահանջներ անել, ո՛չ էլ գումարատերն ունի իրավունք ժամանակից առաջ ետ կանգնեցնել մշակին աշխատութենից կամ չտալ մշակին նրա քրտինքի վարձը»[18]։

Սա, իհարկե, ինչ-որ առնչություն ունի տորնտոնյան մեկնաբանությունների հետ։ Սակայն այստեղ չկա գլխավորը՝ այն, ինչ Տորնտոնին դարձնում է բուրժուական վերնախավերի գաղափարախոս և բանվոր դասակարգի թշնամի,— չկա բանվորի աշխատանք ունենալու իրավունքի մերժումը («աշխատանքի կարիք ունեցողները ոչ մի դեպքում և ոչ մի պայմանում չեն կարող պահանջել աշխատանք՝ որպես իրենց պատկանող իրավունք»[19]) և սրա հետ կապված այն ամբողջ հակաբանվորական գաղափարախոսությունը, որ ելնում էր վարձու աշխատանքը կապիտալին ենթարկելու անմարդկային ձևերի ու շահագործողական ամբողջ սիստեմի արդարացումից։

Հավատ ընծայելով «արդար աշխատանքի սկզբունքի» կիրառմամբ բուրժուազիայի և բանվոր դասակարգի միջև ներդաշնակություն հաստատելու «տնտեսական» հնարավորություններին, հրապարակախոսը կարծում էր, թե դրանով կարելի կլինի «արդարության և արդարութենից առաջացող օրինականության» պահանջները բավարարել, այսինքն հաստատել մարդկային աշխատանքի «չհերքվող իրավունքները», մի բան, որ բացառում էր Տորնտոնը և որի վրա հենված էր նրա հակաբանվորական ամբողջ գաղափարախոսությունը։

Որպես մանրբուրժուական բարոյախոս և ռեֆորմիստ, «Աշխատանք—Труд»-ի խմբագիրը, ինչպես որ այդ հատուկ էր բոլոր դեմոկրատներին, հակված էր ոչ միայն ելուզի որոնել մանրբուրժուական խավերի և բուրժուազիայի դասակարգային շահերի հաշտեցման մեջ, այլև խորապես մտահոգվել արհեստավորական-գյուղացիական զանգվածների տնտեսական աղքատության հետևանքներով. «Մշակներին վնաս հասցնողն է իրանց սեփական աղքատությունը,— գրում էր Գ. Տեր-Մելքիսեդեկյանը նույն այդ «Մշակների հարցի առիթով» հոդվածում,— որ առաջ է եկած իրանց զորություններից կանոնա-

17 «Աշխատանք—Труд», 1879, № 1։
18 Նույն տեղում։
19 Торнтон, նշվ. աշխ., էջ 103։

վոր օգուտ քաղել չկարողանալուց։ Էդ աղքատության ծանրությունը նրանց ճնշում և հաղթահարում է. չի տալիս նրանց համար ապրել իրանց անկախ աշխատանքով ու նրանցից շատերին ստրկացնում է ուրիշների առջև մինչև նրանց վախճանվելը։ Ահա էդ տեսակ ճնշողության դեմ պիտի համախմբվին մշակ մարդիկ, էդպիսի ճնշողության դեմ պիտի ուղղեն իրենց ճիգն ու զորությունները»[20]։

Մշակ դասի սոցիալական ճակատագրում վճռական դեր է կատարում աղքատությունը։ Այն, որ գործավորների այդ խավը զրկված է ու ստրկացված՝ դարձյալ աղքատությունից է։ Ընդ որում, աղքատությունը մեծ մասամբ հետամտում է այդ խավին «սեփական զորություններից», այսինքն հնարավորություններից և ուժերից «օգուտ քաղել չկարողանալուց»։ Թոթափել կարիքն ու չքավորությունը, նշանակում է հավասար պայմանների մեջ դրվել ունևոր խավերի հետ։ Սա մի սոցիալական իդեալ է, որ որոնում է Գ. Տեր-Մելքիսեդեկյանը։ Քանի որ, ըստ երևույթին, կարելի է իրականացնել «արդար աշխատանքի սկզբունքը», ապա և հնարավոր կլինի թոթափել աղքատությունը։

Երբ հավասար պայմաններում բանվորն ու գործատերը գործարք կկնքեն և միասին ու միասնաբար կշահվեն հասարակական աշխատանքից (քանի որ մշակի համար գործատիրոջ հարստությունը իսկական բարեգործություն է, իսկ գործատիրոջ համար մշակի աշխատանքը՝ հարստության աղբյուր), այդ ժամանակ կհիմնվի սոցիալական ներդաշնակության էլդորադոն։

Բայց մինչ այդ, ինչպես հայտնի է, աղքատությունը հետապնդում և հալածում է մշակներին։ Որպեսզի նրանք տեր դառնան մի որոշ հարստության և հաղթահարեն աղքատության ծանրությունը, անհրաժեշտ է, որ գործատերերը չորոշեն «մշակավարձի» այն չափը, որ տրվում է մշակին՝ նրա աշխատանքի դիմաց։ «Ամեն աշխատանք,— գրում է Գ. Տեր-Մելքիսեդեկյանը հետևելով Ադամ Սմիթին,— ինչպես ֆիզիկական կամ մտավոր զորության հայտնի արդյունք, պիտի իր որքանության համաձայն վարձատրվի»[21]։

Տորնտոնը մերժում էր այդ տեսակետը՝ գտնելով, որ երբեք չի կարելի որոշել, թե այս ու այն ապրանքի մեջ որքան աշխատանք է կենտրոնացած[22]։ Գ. Տեր-Մելքիսեդեկյանը, հակառակ Տորնտոնի, կարծում է, որ մշակավարձի չափը սահմանելու միակ ելքը գտնվում է նույն մշակների ձեռքին։ Նրանք չպետք է թողնեն, որ գումարատերերը որոշեն մշակավարձը։

Իսկ ինչպե՞ս կարող են այդ անել։ Ինչպես որ գործարանական և արհեստավորական արդյունաբերությունը կենտրոնանում է «մի քանի անհատների ձեռքում», այնպես էլ մշակները միավորվելով կազմում են ընկերություններ և ընդդիմանում գումարատերերին ու պարտադրում իրենց պահանջները։ «Սկզբում էդ ընկերությունները,— դիտում է Գ. Տեր-Մելքիսեդեկյանը,— թերևս փոքր չափով պաշտպանողական բնավորություն ունեին. բայց հիմա՝ Եվրոպայում՝ նրանց գլխավոր ձգտումնքն է հասարակաց բարելավություն

---

20 «Աշխատանք—Труд», 1880, № 4։

21 Նույն տեղում։

22 Торнтон, ուշ. աշխ., էջ 112։ «Բայց ակնհայտ է, որ այդպիսի գինը անհնար է։ Աշխատանքի մի որոշ քանակությունը, որ անհրաժեշտ է մի բան արտադրելու համար, չի կարող մշտական չափ լինել, այլ ընդհակառակը այն մշտապես փոխվում է,— գրում էր Տորնտոնը։

ձգեն իրանց մեջ, լավ կյանք անցկացնելու միջոցները բոլորի սեփականություն դարձնեն և ոչ թե թողնեն նրանցը մի քանի անհատների ձեռքը»[23]։

Պարզ երևում է, որ բանվորական ընկերությունների դերը հրապարակախոսը տեսնում է աղքատությունը վերացնելու և հասարակական բարեկեցություն և հանրային հավասարություն ստեղծելու սոցիալական կոչման մեջ։ Բանվորական ընկերությունները հենց նրանով են ուժեղ, որ ավելի կարող են դիմանալ գումարատերերի հետ մրցավեճում, քան իրենք՝ գումարատերերը։ Բանը մրցավեճում «ավելի երկար համբերելու մեջ է»։

Միավորվելով ընկերություններում և անդամակցական տուրք տալով, մշակները մի որոշակի «պաշարական» գումար են ստեղծում՝ գումարատերերին ընդդիմանալու և ցանկացած «մշակավարձը» ստանալու համար։ Այս վեճում մշակները միշտ էլ կարող են հաղթել, եթե ձեռք բերվի ապրուստի համար անհրաժեշտ դրամն ու խնայողությունը։ Գումարատերերը «ավելի շուտ են ուզում հաշտվել մշակների հետ ու հաշտվում են էլ շատ անգամ, իմանալով, որ մինչև վերջ համբերելը իրանց ավելի քարուքանդ կանի, քան իրանց հակառակորդ մշակ դասին»[24]։ Որովհետև,— տրամաբանում է Գ. Տեր-Մելքիսեդեկյանը,— այդ մրցավեճում մշակները կարող են միայն ժամանակավոր վնաս կրել, իսկ գումարատերերը՝ կործանվել։ Ահա թե ինչու «մի հայտնի գումար ձեռք բերելով մշակը կարող է, ուրեմն, պահպանել իր շահերը գումարատերերի ճնշողություններից, որոնց տակ մշակը իրան անարդար կերպով հարստահարված է համարում»[25]։

Հանձնարարելով մշակներին միավորվել ընկերությունների մեջ և անդամակցական տուրքի միջոցով մի «պաշարական գումար» ստեղծել՝ գումարատերերի հետ մրցավեճում հաղթող դուրս գալու համար, Գ. Տեր-Մելքիսեդեկյանը, ամենայն հավականականությամբ, աշխատանքի ազատագրության մանրբուրժուական, տրեդյունիոնիստական իդեալն էր փայփայում, առանց որոշակիորեն ընդգծելու համակրանքի ու համաձայնության իր վերաբերմունքը, քանի որ իր իսկ կարծիքով գրականությունը (մամուլը) «իրավունք չունի պաշտպանել ո՛չ մշակներին, ո՛չ հարուստներին»[26]։

Սակայն շարադրանքի ենթաբնագրային ամբողջ ուղղվածությունը հեշտությամբ կարելի է հայտնաբերել՝ հետևելով տրամաբանական այն թեզին, որով հրապարակախոսը միավորում է բանվորների աշխատանքային իրավունքը՝ ընկերություններ կազմելու անհրաժեշտության հետ։ Այդ բոլորն, իհարկե, արվում է մի որոշ ծածկամիտ ու ծածկախոս լեզվով, մի որոշ թիրախացությամբ, հաճախ նույնիսկ մշակներին կշտամբելու արտաքուստ ընդգծված զայրացկոտությամբ, բայց բոլոր դեպքերում մշակ դասի հանդեպ ունեցած խոր համակրանքն ու դասակարգային կողմնորոշումը նրան հանում է աշխատավորական խավերի սոցիալական շահերի պաշտպանության բնագծերը։

Գ. Տեր-Մելքիսեդեկյանի նախկին հրապարակախոսական գործունեության և «Աշխատանք—Труд»-ի համարներում տպագրված հոդվածների միջև գաղափարական խոր անջրպետ և հակասականություն գոյություն չունի։ Ինչ-

23 «Աշխատանք—Труд», 1880, № 4։
24 Նույն տեղում։
25 Նույն տեղում։
26 Նույն տեղում։

պես անցյալում, այնպես էլ շաբաթաթերթի էջերում նա իրեն դրսևորում է որպես մանրբուրժուական ռեֆորմիստ և նարոդնիկական լուսավորչության ներկայացուցիչ, որի կարծիքով հասարակական առաջընթացի ուղին ընթանում է ուսման ու գիտության միջոցով մարդկանց տնտեսական ու հոգևոր կյանքը վերափոխելու դարատև ջանքերի միջով։

Չնայած «Աշխատանք—Труд»-ում տպագրած որոշ հոդվածների ակնարկ սահմանափակությանն ու լիբերալիզմին, որոնք ստեղծում են մի որոշ հակասականություն նախկին հրապարակախոսական երկերի մարտական ու սուր քննադատության միջև, այնուամենայնիվ, Մելքիսեդեկյանը մինչև վերջ կանգնած էր աշխատավորական խավերի սոցիալական շահերի պաշտպանության դիրքերում։

Ահա XIX դարին նրա տված գնահատականը, որ որպես մանրապատկեր տպագրված է «Աշխատանք—Труд»-ի 1881 թ. առաջին համարում։ «Փակ բանտիս խավարի մեջ, վանդակապատ պատուհանիս նեղ ծակով մտնում է գարնանային թարմ օդի և լույսի աննշան հոսանք...»։ Երկաթյա վանդակի միջից տեսնում է բնության հրաշալի տեսարանը։ «Այնտեղ վերակացուների հսկողությունով, գունաթափ մարդեր բերում են ամեն կողմից իրանց աշխատանքների պտուղը և իսկույն ետ դառնում. հողագործը բերում է իր քրտինքով դատած հացը, այգեպանը՝ իր անքուն գիշերներով պահած խաղողը, արհեստագործը՝ իր արհեստի ամենատեսակ նրբությունքը։ Եվ այդ հանկուցիչ տեսարանը ասես թե լրացնում է գեղեցիկ երիտասարդ աղջկերանց ներկայությունը»։ Այս վայրում կանգնեցրած է մի տախտակ, որի վրա կարմիր թանաքով գրված է. «XIX դար. 18... Եվրոպա և Ասիա»։ «Բնությունը իր բոլոր արտադրությունով, օդով, արծաթափայլ առվակներով, երփներանգ ծաղիկներով, գովարար ըմպելիքներով, սննդարար կերակրներով և կուսական հառաչանքներից կուրծքն ուռած վարդակարմիր օրիորդներով նշանակված է վայելելու նրանց, որոնք տեր են ինչևիցե միջոցներով ձեռք բերած ոսկու և արծաթի մեծ քանակության։

Հեռվից, սահմանի գծից դուրս մտքի բոլոր գրականական ներկայացուցիչները կանգնած, մատով ցույց են տալիս Տախտակին և մի ինչ-որ շշնջում են միմյանց մեջ...»[27]։

Դարի այս բնութագրության մեջ կարելի է որսալ հասարակական և սոցիալական անհավասարությունը դատապարտող գրողի և քաղաքացու աշխատավորական-դասակարգային համոզումների նստվածքները։

XIX դարը հարուստների դար համարելով և ընդգծելով դառը դատող ու դատարկ նստող աշխատավոր մարդու կյանքի դրաման, հրապարակախոսը «փակ բանտի խավարի մեջ» (որ է նրա հասարակական միջավայրը) կարողանում է համենայն դեպս տեսնել բոլոր գրական գործիչներին զբաղեցնող դարի գլխավոր խնդիրը՝ սոցիալական անհավասարության պրոբլեմը։ Նրա բոլոր գրվածքները դառնում են այդ պրոբլեմի շուրջ, և նա, որպես աշխատավորական դեմոկրատիայի իսկական ներկայացուցիչ, փորձում է ուղիներ և միջոցներ հանձնարարել դարի մեծ հակասությունը հաղթահարելու համար։

Իր մի աշխատության մեջ «Մեր Կովկասի հիմիկվան լրագիրներ», Գ. Տեր-Մելքիսեդեկյանը գրել է. «Տեր աստված, ինչքան տեսակ ճիճուներ կը-

27 «Աշխատանք—Труд», 1881, N 1։

տեսնենք, որոնք թաք են կացած բոլորն էլ հասարակաց արյունը ծծելու համար, ինչպես ճարպիկությենով շինած, սարքած է էդ հասարակաց արյունծծությունը. ինչպես, վերջապես, դժվար ու վտանգավոր բան է ճշմարտասեր գրչի համար հայտնել էդ բոլոր կեղտոտ տեսարանները էնպես, որ չմթնացվի տպավորությունների ու մեղադրանքների պարզությունն ու ամբողջությունը»[28]։

«Աշխատանք—Труд» շաբաթաթերթում հրապարակելով «Հասարակաց արյունծծությունը» ներկայացնող փաստեր (տե՛ս, մասնավորապես, «Պատկերների գավիթ» հոդվածաշարը 1881 թ. առաջին համարում) հրապարակախոսը չէր կասկածում, որ ինքը դրանով պաշտպանում է «ընդհանուր կարոտացած, բայց աշխատավոր մարդկության» շահերը։ Ճշմարտասեր գրողի համար, իրոք, դժվար ու վտանգավոր էր բացեիբաց և անվարան ներկայացնելու հասարակական անարդարությունը և սոցիալական անհավասարությունը։

«Աշխատանք—Труд»-ը հրատարակելիս Գ. Տեր-Մելքիսեդեկյանը դիմել է այսպես ասած լրագրական գաղտնախոսության կամ ծածկախոսության այն ձևերին ու մեթոդներին, որոնք, իր կարծիքով, կարող էին ճշմարտությունը հասցնել ընթերցողին չվտանգելով ո՛չ իր, ո՛չ թերթի հեղինակությունը։ Ընդ որում, այստեղ տպագրած հոդվածներն ու գրական ելույթները համարձակախոսության և աշխատավորական խավերի շահերի պաշտպանության տեսակետից միանգամայն գիջում են մինչ այդ հրապարակված նրա երկերին։

Պարզ նկատվում է, որ շաբաթաթերթի էջերը ամեն ինչով լցնող խմբագիր-հրատարակիչը, համենայն դեպս, ամեն ինչ արել է բարեհույս և հավատարիմ երևալու այն մարդկանց աչքին, որոնք նրան թույլատրել էին լրագիր հրատարակել։ Երբեմն տողամեջ և գաղտնածածուկ ասված տեսակետներն ու կարծիքները նա մատուցում էր այնպիսի տիրահաճ պաճուճանքով, որ դժվար էր դրանց ետևում հայտնաբերել ու տեսնել հակառակը մտածող նիհիլիստին։ Բայց, այնուամենայնիվ, այդ հնարավոր է։

Այսպես, օրինակ, 1880-ական թթ. սկզբներին «Աշխատանք—Труд»-ի համարներում Մելքիսեդեկյանը տպագրում է երկու հոդված Ալեքսանդր II-ի սպանության առիթով։

Ճիշտ է, որ այդ առաջնորդողներում «Աշխատանք—Труд»-ի խմբագիրը հարձակվում է նարոդովոլցիների վրա, սպանված կայսրին ազատարար անվանում և պահանջում վերացնել «Ռուսաստանի վրա եղած սոցիալական խոցերը»։ Այդ բոլորն այդպես է, և այս դեպքում, իհարկե, կարելի է ոչ միայն մեղադրել, այլև դատապարտել Գ. Տեր-Մելքիսեդեկյանին ռեակցիոն ելույթի և տիրահաճ երեսպաշտության համար։

Բայց այդ հոդվածները գրվել են, մեր կարծիքով, բոլորովին էլ ոչ այն բանի համար, որ հայհոյվեն սոցիալիստ-հեղափոխականները և խունկ ծխվի «ազատարար» կայսեր առաջ։

Դրանց ուշադիր ընթերցումը ցույց է տալիս, որ հրապարակախոսը փաստորեն փորձել է բացել ցարի սպանության պատմասոցիալական արմատները և հենց դրանով հիմնավորել ցարասպանների գործի արդարացիությունը։

---

28 Գ. Տեր-Մելքիսեդեկյան, Մեր Կովկասի հիմիկվան լրագիրներ, Թիֆլիս, 1878, էջ 2։

Հայհոյախոս լեզու բանեցնելով սոցիալիստ-հեղափոխականների դեմ, Գ. Տեր-Մելքիսեդեկյանը, այնուհանդերձ, հարցնում է. «Եվ իրոք, Ռուսաստանը բավականաչափ ուսումնասիրե՞լ է այդ սոցիալիստական, հեղափոխական խոցերը, այդ իսկական մատերիալիստական տեսակետները, նրա համար, որ հետո արժանապես արտացոլի նրանց կործանարար ազդեցությունը իր վրա։ Ոչ մի չափով»[29]։ Ռուս հասարակությունը փոխանակ ուսումնասիրելու «այդ խոցերի իսկական հատկությունները» և գտնելու ղրանց դեմ պայքարի «իսկական միջոցներ», փակում է իր աչքը այդ բոլորի հանդեպ և պտտվում ինքն իր շուրջ։ «Ընդ որում,— շարունակում է հրապարակախոսը,— եթե հիշենք Ռուսաստանի այն հյուծված ու լարված վիճակը, որի մեջ իրերի հարկադրանքով դրված էր նա 1870-թվականին ֆրանս-պրուսական ջախջախումից հետո, նույնպես և, եթե աչքաթող չանենք այն վիթխարի, միլիոնանոց ծախսերը, որը անդառնալիորեն կատարում էր Ռուսաստանը 1876 թվականին Թուրքիայի հետ տևական պատերազմի ժամանակ, ապա, մեզ համար հասկանալի կդառնա այն հանգամանքը, թե ինչու Ռուսաստանի ներքին գավառներում մամուլը ընդհանրապես ստիպված է եղել դատապարտել իրեն վտանգավոր լռության և անգամ շրջապատում կատարվող չարաշահումների դիտավորյալ անգիտացման։ Եվ ի՞նչ... Այդ չարաշահումները... ծնեցին դժգոհ տգետների մի մասսա, որոնք իրենց հիմար անզարգացածությամբ սկսեցին այդ չարաշահումները բնորոշական համարել, որոնք որպես թե բխում են ամբողջ պետական կարգից։ Ընդ որում, այդ տգետների գաղտնի կուսակցությունների ձգտումը, որ իրենց անվանում են նիհիլիստական կուսակցությունների անդամներ (որպիսին հասկացվում էր հեղափոխական-սոցիալիստական ընկերությունը, որը ժխտում է ժամանակակից ռուսական իրականությունը,— այնպես խարխափում են մթության և անորոշության մեջ, որ այսօր նրանք ռուսական աշխարհին սովորեցնում են լիակատար անիշխանություն»[30]։

Ուրեմն, ինչպես երևում է, հրապարակախոսը նիհիլիստական, հեղափոխական-սոցիալիստական կուսակցությունների՝ «Ռուսաստանի այդ հասարակական խոցերի», առաջացումն ու գործունեությունը պատմական հանգամանքների, արտաքին ֆինանսական ծախսերի, պատերազմական իրադրության և երկրի ներքին գավառներում կատարվող տնտեսական չարաշահումների հետևանք է համարում։

«Աշխատանք—Труд»-ի 1881 թ. երկրորդ համարում, պետերբուրգյան «Голос»-ում տպագրված Մարտենսի հոդվածի առիթով դարձյալ անդրադառնալով այս հարցին, Գ. Տեր-Մելքիսեդեկյանը նկատում է, որ ոչ մի իմաստ չունի ուղղումներ մտցնել միջազգային իրավաբանական կոդեքսում՝ ցարասպաններին քաղաքական ապաստան չտալու վերաբերյալ (ինչպես այդ առաջարկում է Մարտենսը), որովհետև այդ երևույթը միջազգային իրավունքով սահմանափակել կամ արգելել չի կարելի։

Ցարասպանությունը տվյալ երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական վատթար դրության հետևանք է։ «Բայց բանը նրանումն է,— նկատում էր Գ. Տեր-Մելքիսեդեկյանը,— որ «չարիքի արմատը» այնտեղ չէ, որտեղ միջազգային իրավունքի ռուսական ներկայացուցչին հարմար է գալիս ուղղելու ռուս

29 «Աշխատանք—Труд», 1881, № 1։
30 Նույն տեղում։

կառավարության և հասարակության հայացքը։ Այն արմատավորված է, ավաղ, ռուսական մտքի աղքատացման և ռուսական կենսամակարդակի աստիճանական անկման մեջ»[31]։

Այնուհետև, հրապարակախոսը բերում է փաստեր ու թվեր ցույց տալու համար, թե ինչպես մեկ տասնամյակի ընթացքում կրկնապատկվել են Ռուսաստանի արտաքին պարտքերը՝ 230 870 634 ռուբլուց հասնելով 597 837 793 ռուբլու։

Չարիքի արմատը, ուրեմն, երկրի տնտեսական դրության մեջ է և, հետևաբար, այն քաղաքականության, որ սպանված ցարը վարում էր երկրում՝ տասնամյակներ ի վեր։ Եվ Մելքիսեդեկյանը, որպես իսկական մանրբուրժուական սոցիալ-ռեֆորմիստ, առաջարկում է երկրի տնտեսական վերափոխումների մի ծրագիր, որը որպես թե կարող էր կանխել ցարասպանությունը և վերացնել «սոցիալիստական-հեղափոխական խոցերը» երկրում։

Ո՞րն է այդ ծրագիրը. մեծացնել տարրական, միջնակարգ և բարձրագույն կրթական հիմնարկների թիվը՝ ապահովելով այնտեղ գործնական, տեխնիկական գիտությունների տիրապետությունը, դուրս հանելով այնտեղից «մեռած կլասիցիզմը». նորացնել դատական և վարչական մարմինների գործունեությունը՝ հին, ետամնաց չինովնիկության փոխարեն՝ նորերին կարգելով, հիմնական վերամշակման ենթարկել գործող «Օրինագիրքը», ներշնչել իննսուն միլիոնանոց ռուս ժողովրդին ինքնուրույն նախաձեռնության ոգի և կազմակերպել գիտական, արդյունաբերական, արվեստական և հողագործական նորահնար մեթոդների ու միջոցների յուրացումը՝ ամեն մի ազնիվ աշխատանքի և նախաձեռնության հավանություն տալու միջոցով. այդ բոլորի վրա սահմանել մամուլի ու խոսքի բարոյական հսկողությունը[32]։ Ահա ծրագիրը։

Գ. Տեր-Մելքիսեդեկյանը չէր կարող ինքն իրեն հաղթահարել։ Նարոդնիկական-լուսավորչության հետևորդ և կողմնակից, նա հասարակական զարգացումը անվերջ բարեփոխումների (ռեֆորմների) ուղի էր համարում. ընդ որում, այստեղ գլխավոր դերը պատկանում էր կրթությանը։ Լուսավորել ազգը նշանակում էր կրթել նրան։ «Ուսումը կյանք է, ուսումը զվարթ է» թևավոր խոսքը նա գործածում էր խոր համոզումով։ «Ուսումը... միշտ և ամեն տեղ օգնում է, ճամփեք է մեզ նշանց տալիս ցավից աղատվելու»,— ասում ու կրկնում էր՝ բռնած «հավատի եղջյուրներից»[33]։

Սոցիալական նրա իդեալը այլ բան չէր, բայց եթե լուսավորությամբ բարեփոխված հասարակությունը, ուր բոլոր ազգերի ներկայացուցիչները հավասարապես կօգտվեն հասարակական բարիքներից և մոռանալով անձնական շահերը կմիանան՝ «ընդհանուրի (բոլորի) շահը առաջ տանելու աննախանձ կերպով»[34]։

Իր նշանավոր «Նվեր քյասիբ գեղջցիներին» հրապարակախոսական երկում Գ. Տեր-Մելքիսեդեկյանը, դիմելով աշխատավոր հողագործին և նկարագրելով նրա կրած զրկանքներն ու տառապանքները, խոստովանում է, որ ինքը «ծանր կերպով քննելով» գյուղացու խեղճության պատճառները, եկել է այն

31 Նույն տեղում, № 2։
32 Նույն տեղում։
33 Գ. Տեր-Մելքիսեդեկյան, Նվեր քյասիբ գեղջցիներին, Թիֆլիս, 1879, էջ 43։
34 Նույն տեղում, էջ 45։

եղրակացության, որ այստեղ գլխավոր դերերը կատարում են «տգիտությունը և անուսումնությունը»։ Սա էլ միանգամից փոխել է նրա վերաբերմունքը քար ու հողի հետ կռիվ տվող, խեղճ ու զուրկ գյուղացու նկատմամբ։ «Մտիցս գցեցի իմ սելը դեպի ազգակիցք, բարեկամներ ու սկսեցի էդ օրից սիրել առհասարակ ընդհանուր կարոտացած, բայց աշխատավոր մարդկության... ես ատեցի էդ օրից բոլոր քեզ անխճմտանք կերպիվ թալանողներին»[35]։

Գ. Տեր-Մելքիսեդեկյանի աշխարհայացքը բնութագրելիս և գնահատելիս պիտի ելնել ամենից առաջ նրա գյուղացիական-դեմոկրատական համոզումների ուղղությունից։ Այդ ուղղությունը, անշուշտ, ինչ-որ չափով և ձևով կապվում էր Մ. Նալբանդյանի երկրագործական ուսմունքից մակաբերվող հետևությունների ու եզրակացությունների հետ։ Ճիշտ է, տվյալ դեպքում խնդիրը սահմանափակվում էր լոկ համադեմոկրատական տրամադրությունների քարոզով և աղքատի ու հարստի հակադրությունն ու հակասությունը լուսավորության օգնությամբ հաղթահարելու միամիտ պատկերացմամբ, սակայն ընդհանուր առմամբ դա հենց այն «սկեպտիկյան ուղին էր, որին զինվորագրեցին 1860—1870-ական թթ. նալբանդյանական ուղղության մեր գրողներն ու հրապարակախոսները (Ղ. Աղայանը, Գ. Տեր-Հովհաննիսյանը և ուրիշներ)։

Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը պատահականորեն չէր շեշտում գյուղացիական դեմոկրատիայի հետ կապված գրողների գաղափարական, հոգևոր կապերը Մ. Նալբանդյանի հետ, թեև նրանցից և ոչ մեկը փաստորեն չէր ընթանում կամիշինյան նահատակի հեղափոխական-դեմոկրատիզմի ուղիով։ Խնդիրը այս դեպքում պարզապես դեմոկրատիզմի և դեմոկրատիայի գաղափարական-հասարակական նկրտումների կապերն ու աղերսներն են հեղափոխական դեմոկրատիզմի հետ, որը և հարկադրում էր սովետական նշանավոր պատմաբանին հենց այդ կապերի մեջ որոնել ու գտնել նալբանդյանական ուղղության կենսունակությունը և ազդեցության ոլորտների ընդարձակությունը։

К ВОПРОСУ О ПУБЛИЦИСТИЧЕСКОМ НАСЛЕДИИ Г. ТЕР-МЕЛКИСЕДЕКЯНА

Доктор филол. наук К. А. ДАНИЕЛЯН

(Резюме)

В начале 1970-х годов в Ленинградской библиотеке им. Салтыкова-Щедрина был обнаружен комплект еженедельной газеты армянского народника Григора Тер-Мелкиседекяна «Ашхатанк—Труд», в котором недоставало только 6-го номера за 1880 г. Находка дает нам возможность полнее охарактеризовать общественно-политические взгляды и народническую деятельность Г. Тер-Мелкиседекяна.

35 Նույն տեղում, էջ 10։